ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Կորյուն Սամսոնյանի կողմից 2023 թվականի փետրվարի 10-ից 2023 թվականի օգոստոսի 10-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով և աշխատանքային էլեկտրոնային փոստով բաժնի պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ (արտաքին և ներքին շրջանառության), պատրաստել եմ պատասխան գրություններ ինչպես ռուսերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով,
- նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցման եմ ներկայացրել Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների և Տեսչական մարմնի մյուս աշխատակիցների՝ արտասահման գործուղման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները,
- կազմել եմ Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները,
- իրականացրել եմ Սպառողների միջազգային օրվան (մարտի 15), Անասնաբույժի միջազգային օրվան (ապրիլի 28) և Բույսերի առողջության պաշտպանության միջազգային օրվան (մայիսի 12) նվիրված միջոցառումների տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներ, մասնավորապես՝

հյուրերի ցանկի կազմում, հրավերների պատրաստում և ուղարկում, արտասահմանյան գործընկերներից ստացված ողջույնի և շնորհավորական ուղերձների թարգմանության ապահովում և այլն,

- սպանդանոցների կառուցվածքի և գործունեության վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրելու նպատակով աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով կապ եմ հաստատել ԵՄ ավելի քան 20 երկրների անասնաբուժության ոլորտի լիազոր մարմինների հետ, որոնց մի մասից ստացված տեղեկատվությունը թարգմանել եմ հայերեն և տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը,
- կենսաբանական ակտիվ հավելումների շրջանառության կարգավորման փորձն ուսումնասիրելու նպատակով աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով կապ եմ հաստատել ԵՄ ավելի քան 20 երկրների սննդամթերքի անվտանգության ոլորտի լիազոր մարմինների հետ, ստացված տեղեկատվությունը թարգմանել եմ հայերեն և տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը,
- կատարել եմ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի և հոդվածների թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ Կորյուն Սամսոնյան

10 օգոստոսի 2023թ.